

1843

1900

ԲԱԴՄԱՎԻԴ

ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ՕԳՈՍՏՈՒ ՀԱՍՈՐ ԵԼ.

ՕԳՈՍՏՈՒ

ՀԱՍՈՐ ԵԼ.

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԱԶՆԻԻԾ

—••••—

2 այն Ազնիւը պիտի
նկարագրենք որուն
վրայ թիւզանգացի
մեծ բանաստեղծն
«Մուե Ազնիւ» կող-
րեքէր, մինչ երիտա-
սարդ բարեկամն՝ ուսու-
մթարք պատերազմի
ժամանակ՝ կոհակ կո-
հակ ալիքներու մէջ

աղիւ հոգին կ'աւանդէք և բանաստեղծնի ի
զնոր գրկաբաց՝ անոր զարձին կը ոպասէր.
պիտի չնկարագրենք այն Ազնիւը, որուն
ուրախ զարձին լուր չտոփին. և մէ՛ սրտով ու
հոգով մարբաֆայլ այն չափները, որոնք
թեւատարած կը ճամփրեն հոն վերը եթերա-
կան սահմանին մէջ, և ոչ անոնց նմաններն
որ հոս վարը կը գտնուին և հայութիւնը
Ազնիւ անոնց անոնց կու տայւ:

Անիկա որ իւր գործոց ու վարժանց մէջ
բարի, սիրելի, քաղցր և համակրիի է. ա-
նիկա՝ որ իւր բերնեն ու սրտէն կիրթ, փա-
փուկ, համեստ և անսեթեւեթ բառեր և բա-
ցատրութիւններ կ'արտաքրեէ. այն է զոր
ժողովուրդը Ազնիւ ածականով կը պատիէ.
այն է որ բարի ու շար, երջանիկ, և ա-
պերջանիկ անձանց համակրելին է և պաշ-
տելին: Այն է անոր նմաններն և անման-
ները մեր զրութեան առիթ կ'ըլլան:

*

Հայութիւնը օր աւուր իւր հեթանսսական
հին բարբէն հեանալով՝ բաղարակիրթ աղ-
զաց կը հետեւի թէ բարբով և թէ մոտօք. և այս
ուղարկութիւնը մեր մէջ թէ լաւ և թէ յօդի
արցիւը ունեցաւ. և միիթարտական է ըսեն,
թէ մենք Երուպային աւելի մեզըր կը ծծենց
քան թէ մահացու կեղծ: Երուպական քաղա-
քականութիւնը մեր անուս զասակարգին մէջ
մոցնոցն հայ մամուլին է, որ մինչեւ ցարդ
անոր ընդհանրապէս ազնիւն ու բարին, մատաց
և հոգոյ կազզուրիշն ներշնչելով, մեր հա-
սարակութեան մեծ մասը գտած ենք հոգե-
կան և ազնիւ: Հայ մամուլը մինչեւ ցարդ
մեր ուսմիկն ազու և արդինաոր զա-
տիարակն եղաւ, զասակարակ մը պարկեցա-
ւ միանգամայն ազնիւ. և կը ցամինց ըսերու

22

որ մեր մամիցյ այս գեղեցիկ երկու յատկութիւնները զգալի կերպով կը կեղաստի՝ շնորհի մի քանի զրիշներու որ զես նոր զրական ասպարէզի մէջ կը թեւակուին :

Եւ մեր ըստան ակն յայտնի է այն ամենուն՝ որ ուշագրութեամբ կը քննեն մեր արդի լրագրութեան նոր աշխատակցաց ուղղութիւնը. ուղղութիւն ոչ ուղղել :

Ժամանակաւ հայ լրագրութեան ամենէն հրատապ խնդրոյ նիւթերն ին կրօնական, լեզուաբանական, վարժարանական և կտակի մասին հականառութիւնը, այժմ աստնց փոխանակեց քննազատութիւն նորատիպ զրբերու ։ Եւ ընթացաւարտ աշակերտ մը երբ զրագէտ ըլլալու մարմաջէն բնուու՛ անզէն իր անզրանիկ զրչի արդինքն կ'ըլլայ զրախօսական մը : Փոյթ չէ թէ ինչո՞ւ զեռաբուսիկ զրասէր մը շուտով զրագիտառմասին այդ ամենէն զժուար մասնանիւցին կը զմէ . նա աղատ է իր որոշողութեան մէջ. բայց ազատ չէ լրագրական պարտ ու պատշաճ օրինաց գէմ զործելու ։ Եւ քանի որ լրագրութիւնը ժողովրդեան զաստիարակն է, անազնի զաստիարակներ ունենալին, մողովրդեան վրայ լաւ ազգեցութիւն մը չունենար. և մեր համեստ և ազնի հայութիւնը, եթէ այդ նորածիլ անազնի զրիշներէն իսրոշելավ, անմիթար և անտերունչ թողու լրագրութիւնը, նա բոլոր իր իրաւանց մէջն է: Գրենք ազնիւը, խօսինք ազնիւը և զործենք ազնիւը, այն ատեն յայթանակած ենք, սիրուած ենք:

Քննազատենք, բայց ազնի զրոյվ :

Վերջերս հայ լրագրութեան մէջ տեսանց այնպիսի քննազատական յօդուածներ, որոնց ազնուութենէ զորկի լինելը՝ ցաւ ու կոկիծ միայն կը պատճառէ. հայ լրագրութիւնն երբէք ընտանեկան տիպուր պատկերներ, անուանարկ զրական պայքարներ, և ճակատաբաց անկրօնութիւնն չէր քարոզած. և ներկայիս ատոնք ծնունդ կ'առնուն, զրցեալ՝ քինանընդուութենէ, անփորձութենէ և սովինառութենէ. Մին ընտանեկան և ընկերական ազնուութեան զէմ սիսալ կը զործէ, երկրորդն զրականական ազնուութեան և երրորդն հոգեկան զարաւոր պաշտելի և բարձր ազնուութեան. և երեցն ի միասին անազնի ուղղութիւն :

Քննազատառթեան նպատակն պէտք է ըլլալ ուղղել սիսալ զործին կամ զրութեան, առանց զոնիկի և ստոր լեզու մը զործածելու, առանց բռնկելու կամ զայրոյթ պայթեցնելու. ինչ որ սիսալ Է՝ ցուցնելու է հանգարտ, կիրթ զրչով և ազնի բացատրութեամբ և այն ատեն հասարակաց կարծիքը կը միանայ քննազատին զաղափարին. այն ատեն քննազատը կը վաստի իւր զատը: Քննազատը պէտք չէ ցոյց տալ իւր ընթերցողաց՝ որ ինքը նպատակ ունի հեղինակ մը աւելի անուանարկ ընել՝ քան թէ ուղղել. պէտք չէ ցոյց տալ որ քննազատը հեղինակութեան մը աւելի սիսալներն փափազած է ցոյց տալու քան թէ զովիլի մասերն. այլ անկողմանակալ ոգուլ, հաւասարապէս գրքին թէ առաւելութիւնն և թէ պակասութիւնը մատնանիշ ընելու է: Քննազատն իւր հականառութեանց մէջ երրորդ անձ մը որ բնաւման չունի քննազատեալ խնդրոյն հետ, պէտք չէ զայն հրապարակ հանել, մանաւանդ երբ պարսաւելու նպատակաւ մէջ տեղ կը բերուի այդ երրորդ անձը. և այսպիսի քննազատութիւնը մը՝ ոչ միայն անփորձ այլ և անազնի զալար զրչի մը արդինք լինեն կ'իմացուի: Գիրը մը կամ յօդուած մը որ լոյս կը տեսնէ, նա նոյն օրէն զատապարտուած է խարազանուելու կամ պատկուելու. Հեղինակն իշխանութիւն չունի սանձ զնելու հասարակաց կարծեաց ազատութեան, որ կը պատկերն պարբերական կամ ամսական թերթերու մէջ. ամէն անհատ որ առաւել կամ նուազ ուսեալ է նա պատ է իր զաղափարներն յայտնելու այն զրբի մասին՝ զորի կ'ուսումնասիրէ. և որչափ որ յարգելի է անոնց ազատութիւնը, և ոտակայն յօդուած հայ զրականութեան և քննազատեալ հեղինակին, շատ փափաքելի է որ քննազատն իւր ուսումնասիրութեան ձեռնչաս լինի և քաջ յորին ու լաւն իրարմէ զատելու, և այնպիսի եղանակաւ քննազատէ որ ինքն քննազատուելի ազատ լինի, փրկելով հասարակութիւնը քըննազատութեանը կարգալու ձանձրոյթէն: Քննազատն՝ սրչափ որ շատ զորաւոր պաշտելի և բարձր ազնուութեան. և երեցն ի միասին անազնի ուղղութիւն :

կան շահէ դրգուել՝ զատափետէ կեղինակւ-
թիւն մը և կեղինակը. և ցաւալի է ըսեն որ
մեր մէջ այս տեսակ քննազառութիւնը եր-
թառով կը բազմանան : Քննազառն նոյն
իսկ փափաքիլի է որ նկատողութեան տանու-
քննազառելի կեղինակին ասուիճանը, այլ է
եկեղեցական, կամ բարձրասահճան անձ մը,
կամ բանասէր, զրագէս և կամ արզինաւը-
հրապարակագիր մը և այլ զեռաբռնիկ յա-
ւակնու երիտասարդ զբակի մը : Զանա-
զանութիւն գնիեն՝ գրական օրինաց հակա-
ռակ չէ, բանի որ այս երկու զասակարգի
կեղինակներն հասարակութեան աղջեւ, նոյն
և նման պատիւն ու յարգանքը չեն վայելեր,
այլ մին առաւել և միւսն նուազ :

Եւ որպէս զի մեր այստան դրախտական
օրէնքներու ցուցաբրութիւնը մասնաւորապէս
այս կամ այն քննազատ զիիչներու իրեւու
զամ մի տալ և փափուկ զգացմունքնին վիրա-
տրող չկարծուի, իը փութանք ըսկու թէ մեր
այս զրութեան նպատակն է համառու պաշ-
պատախիան մը տալ այն ամէն դրախտա-
կան յօդուածներու՝ որոնց գրուեցան ահա-
սարակ հայ մամոզներէն լոյս անսած նոր
հրատարակութեանց վրայ : Քննազատննց
զրերը, այդ զրական մեծ արդինց մ'ունի,
բայց ամէնքնին ալ ջանանք որ բննազատե-
լու ժամանակ՝ հեղինակներն շատ անզամ
իրաւունք չունենան մեզի յիշել տալու Ա-
պիեսի առածն *Ne sutor ultra crepidam!*

*

Ազնիւ լինել կրօնական և հոգեկան տես-
սակէտով, այդ ալ կարեւոր է մեր յառա-
ջապիմովթեան համար . հասարակութեան
մասուրական անդաստանին մէջ մշակինք
զիտովթեան ամենէն գեղեցիկ և ինչկաւէտ
ծաղիկներն առանց փուշի և թոյնի: Հայրենին
կրօնը որ զարերով ազգին համար սուրբ
աւանդ մը մնացած է, մամուլը յառաջա-
պիմովթեան զիմակով կը ջանայ անոր եւ
անազնիւ և մահացու: Հարուած մը տալ:
Բայս առանց հոօնիք չե կայ Հայութին:

Շատ իբրաւիք ի նիկացիք են մեր մեծ և ա-
զատամիտ իսլամադիներն են միզյն այս տողերն .
«Հայը իր հաւատաքով է որ Հայ կը մայ-
Մեր մասումըցին մասարական վիճակը հիմ-

մական փոփոխութիւն չել կրած. կը մնայ այսօր նոյնը ինչ որ էր զարերէ ի վեր. Այն ուժը որ զարերէ ի վեր զինքը բռնած է և կը պահպանէ, եթր տկարանայ, թուղնայ, այդ ժողովուրդը այլ եւս ո՛ և է յենարան չունենար կանցուն մնալու համար. իր մարդագիներէն զրկուած է։ Այն օրէն ազգային կրօնիք յինարանները իրավական՝ երբ մասնվար ազատաբար ժողովրդեան անսատուած ծովիւն բարողեցի. «Հիմսիսակայլ և Կ'Ծակ» որ մեր լրագրութեան ամենէն ազատամիտ թերթերն համարուած են և սակայն ատոնք այնքան սանձարձակ շահալածեցին ամէն անձի կրօնական ազնիւ և բարձր զզացմունքը որքան ներկայ մի քանի թերթեր, որոնք հայ մամլյա ազատ թերթի անունն իսկ չեն կրեր։ Պատնիք զիսութեան և յառաջադիմութեան դրօշն ծածանելով, կը ջանան յավմահարել ո՛ և է կրօնական պատամոննք. կը ջանան տապալել Արարացութիւնը, և կը ջանան խել զուրս կորզել Հայ մարմնէն հոգին. և հայութիւնը առանց հոգեյ զիսկ մ'է ողբարի. Չոլայի, Թինանի և Տարումինի փարուապետութիւնը, Հայութեան համար շատ գոււարամար են, և ի զուր Հայ մամլյա մի քանի յաւակնուս քրչակներ կը ջանան ատոնցմոնվ օգտակար ըլլալ ազգին միամիտ զաւակաց. ատոնիք երբեք հայութիւնը վեր պիտի շարձրացընեն. այլ գեւ ի վար պիտի քաշեն՝ հիւծենով անոր առողջ հոգին ու մարմինը.

*
Ներշնչենք ազգին՝ հոգեկանը և կիրթը,
ատոնը ազնիւ են:

Աստուածաբանական փոքրիկ խնդիր մը մեծամեծ վիճաբանութեանց առարկայ կ'ըլլ-լայ, կը յուզուի Հակածառութիւնը, թեր ու զէմ իմաստասիրական և վարդապետական գրութեամբ կը լիցուին թերթերը ի պաշտպանութիւն խնդրոյն: Կրօնական չնչին խնդիր մը, որ փոքրիկ արատ մը կը թողու գաւառնանցի վրայ, այն մեծ վայնասուն կը հանէ աստուածաբան վարդապետաց գատուն մէջ. և ընդհակառակն երբ Հայ բնապաշտը կ'աշխատի ընդպարձակ յօպւաւներով հիմնայատակ ատապալել ազգին կրօնքն և հաւատոց վարդապետավութիւններն, այն ատեն մեր կրօ-

նական թերթերն ոչ Հայոց և ոչ կարծիք ունին։ Բայց նախ հիմք հաստատուն ըրուներ և յետոյ զարգերու և դրուագներու պարագինք։ Չատենք չպահարակենք ժամանակակից զիտումինը և անոր ծնած մեծ յառաջադիմումինը։ բայց և վարպետ ըլլանք զիտումինը այն մասերն միայն իրացնելու, որ հայումինը կը զարգացնեն և մեր զիւրաբեկ կազմուած քին չեն վասեր։ Մամուլը ազատ է վատն ու բարին սերմանելու մեր հասարակումեան մէջ։ և ուամկին մէջ աւելի շարն ու վասարաբը շուտով ճարակ կը դանեն։ և մոզուուրը կը դայթակղի և ասոր միտքը շինելու համար, կարեւոր է որ մեր կրօնական թերթերը գրիշ շարժեն։ և փախանակ ապարդին և կամ ոչ այնքան կա-

րեւոր խնդիրներու և վլձերու հետ պարապելու, ջանան թնապաշտական իմաստափրութեան առջեւ անսասանելի պարիսպ մը կանգնել կրօնքի իմաստափրութիւնը՝ զարդարուած զիանական և իմաստափրական զօրեղ վաստերով։ և այն ատեն հայրենի կրօնը սահնակով ըլլալու վանագին կ'ազատի, և կրօնքը ապրելով, կ'ապրի և հայութիւնը։ առանց միոյն չկայ միւր և միոյն բարձամայք՝ ջնջուած է միւր։ Մէնք յարգենք մեր զարաւոր զոյումիեան ամենէն ազնիւ յատկումինը՝ կրօնական և հոգեկան լինելը. զայն կը ներշնչեն նոյն իսկ մեր ամենէն ազատամիա թերթերն։ զրիենք հոգացն ազնիւը՝ կրօնը, և յարգենք յառաջապես վասերը՝ զիտումինը վասերը, զիտումինը զիտումինը։

Հ. Ս. ԵՐԵՄԵԱՆ



ԱՐԺԱԼՈՅԱ

ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ

(Ծար. տես էջ 289)

Է.

Հալածանք բյուտունէութեան յ՛թ եւ յ՛գ. Դարս։ — Նահատակօ ի Փոքր Հայո։ —

Մերուժան Եպիսկոպոս Հայոց։

ԷԱ.ԱՆ ԵԱԼ քրիստոնէութեան հետքը ինսուել ի Մեծ ի բուն Հայոց կրօնար գիւրին ըլլալ, եթէ ասոնց քաղաքական պատմութիւնն այլ պայծառ ըլլար թ և Գ. դարուց մէջ. յորս՝ որչափ այլ Խորենացի կարգաւ ազգարանէ մեր Արշակունի թագաւորութը՝ Մանասրուկէն մինչեւ ի Տրդատ (200 կամ աւելի տարի), սակայն յոյն և լատին ժամանակակից կամ մերձաժամանակ պատմիք՝ ուրիշ հայ թագաւորներ այլ յի-

շեն։ Սասանեան Պարսից ծագումն և հակառակութիւնն ընդ Հայոց՝ զրիթէ Գ. դարու սկիզբներէն՝ մեծ զրովման և շփոթութեան պատճառ եղաւ, և ոչ միայն քաղաքական գործք ի մթան մնացին, այլ և քրիստոնէութիւնն այլ ծածկուեցաւ, կամ լաւ եւս ըստենք անժանոնթացաւ. մինչեւս Փոքր Հայք Հռովմայեցւոց հաստատ տէրութեան ներքեւ ըլլալով՝ տեղոյն դէպքերն այլ ծանօթագոյն են, նա և գրիստոնէութեան նկատմամբ՝ որ է այժմ մեր խնդիրն։

Փոքր Ասիոյ մէջ երեք ընդարձակ նաշանք կամ աշխարհք՝ զուտ Հայք կոչին, Ա., Բ., Գ., որոց բնակից մեծագոյն մասամբ Հայք էին, ոչ փոքր մասամբ նաև ասոնցմէ գուցս եղած կապագաղովիկիոյ կամ Գամբաց մէջ, այլ և ի Պոնտոս և ի Փարիսիա, ուր շատ Սուրբ նահատակը եղած են. և յատուկ Հայոց քաղաքը կոչուածք, ինչպէս՝ կոմանա Հայոց, Մելիտինէ Հայոց, Նիկոպօլիս Հայոց, Սատաղ, և այլն. թէ ասոնց մէջ թէ մերձաւորաց՝ աւելի կամ պակաս նշանաւորաց, որպիսիք են կեսարիա (ի Համբն Առաջին), Աբրաստիա (յի Հայու), Ալրակ, Ալրախոս, Ամասիա, Եփսայիտա, Նկոկիսարիա, և այլն, (որոց ոմանց անուանքն հայացն հնէն), այն երկուց (Բ., Գ.) դարուց մէջ, մանաւանդ ի կէս Գէն և ի սկիզբն Դէն, կըրնանք ըսել անթիւ վկայ եղած են, ու-